ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 37-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան			
Արմեն Գրիգորյան			
Վարսիկ Ասրյան			
Անուշ Բաղդասարյան			
Ատոմ Գագինյան			
Անուշ Իսպրիյան			
Ջոն Կիրակոսյան			
Արծրուն Հակոբյան			
Վանո Հակոբյան			
Լիլիա Հարությունյան			
Հմայակ Մարտիրոսյան			
Մարտուն Մարտիրոսյան			
Սյուզաննա Նազարյան			
Աղունիկ Նալբանդյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

07.05.2025թ. ք. Ստեփանավան

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Գ. ՇԻՐՄԱԶԱՆՅԱՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.09.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 105-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԱՎԱԳՅԱՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.04. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ (ԸՆՏԱՆԻ) ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

7. ՄԱՅԻՍԻ 9-Ի՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԼՂՀ ՄԱՐՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՋՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՋՈՀՎԱԾ ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 38-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 33-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետով, «Արխիվային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով, Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքում արխիվային փաստաթղթերի համալրման, հաշվառման, պահպանման և օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		

Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի թիվ 38-Ա որոշման

ԿԱՐԳ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՐԽԻՎԻ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ, ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Ստեփանավանի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների փաստաթղթերի հաշվառման, պահպանման, օգտագործման և արխիվացման կարգը:

2 Ստեփանավանի համայնքապետարանում և նրա ենթակա կառույցներում պահպանվում են համայնքապետարանի ներքին և արտաքին գործունեության հետ կապված իրավական և ոչ իրավական բնույթ ունեցող փաստաթղթերը (սույն կարգում կիրառվող իմաստով այսուհետ՝ փաստաթղթերը):

3. Փաստաթղթերի ժամանակավոր (մինչև պետական կամ համայնքային արխիվներ մշտական պահպանության հանձնելը) պահպանելու առավելագույն ժամկետներն են՝ տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային կազմակերպությունների փաստաթղթերի համար՝ 5 տարի.

4. Փաստաթղթերի հաշվառման, պահպանման, օգտագործման և արխիվացման նպատակով պետք է կազմվի փաստաթղթերի ցուցակ՝ նշելով փաստաթղթի հերթական համարը, փաստաթղթի անվանումը, փաստաթղթի թերթերի քանակը, որն ամրակարվում է փաստաթղթերի առաջնամասում, որից հետո փաստաթղթերը տեղադրվում են թղթապանակի մեջ (այսուհետ՝ փաստաթղթային գործ): Յուրաքանչյուր թղթապանակի մեջ կարելի է տեղադրել մեկից մինչև մի քանի փաստաթղթային գործեր: Փաստաթղթային գործերը ընդունման-հանձնման ակտով հանձնվում են փաստաթղթերի արխիվացման համար պատասխանատու անձին:

5. Փաստաթղթերը պահպանվում են դրանց համար նախատեսված սենյակում կամ սենյակի առանձին հատվածում՝ պահպանելով հակահրդեհային կանոնները: Թղթապանակները դասավորվում են դարակների վրա՝ ըստ իրենց համարների: Յուրաքանչյուր դարակաբաժնի վրա գրվում են այդտեղ տեղադրված՝ գրանցված կամ հաշվառված, համարները կամ այդ համարների միջակայքը:

6. Փաստաթղթերի պահպանման սույն կարգի ընդհանուր պահանջները պահպանելու համար պատասխանատու է համապատասխան բաժնի պետը, իսկ փաստաթղթերի ամբողջականության, սույն կարգով սահմանված կարգով պահպանման, օգտագործման և արխիվացման համար պատասխանատու է համայնքային ծառայողի պաշտոնի անձնագրով նման պարտականություններ ունեցող աշխատողը (այսուհետ՝ պատասխանատու աշխատողը):

7. Պահպանված փաստաթղթերի օգտագործման անհրաժեշտություն առաջանալու դեպքում, կատարողը պատասխանատու աշխատողից ստանում է փաստաթղթային գործը, կատարում ընթացիկ գործողություններ և եթե փոփոխություններ են կատարվել, ապա նույն կարգով կազմում է լրացուցիչ գործ, որը դրվում է նախկին գործի հետ և հանձնվում պատասխանատու աշխատողին, իսկ եթե փոփոխություններ չի կատարվել՝ նախկին գործը վերադարձվում է պատասխանատու աշխատողին: Վերջինս ստուգում է գործի ամբողջականությունը և տեղադրում տվյալ գործի համար նախատեսված տեղում:

8. Համայնքային արխիվում գործերը մինչև մշտական պահպանության հանձնելը պահպանվում են՝

8.1. հավերժ ՝ մշակութային, պատմական արժեք ունեցող փաստաթղթերը

8.2. երկարաժամկետ՝ մինչեւ 50 տարի՝ աշխատանքային գործունեության փաստաթղթերը՝ աշխատանքի ընդունման, ազատման հրամանները, աշխատանքային պայմանագրերը, աշխատավարձի ցուցակները:

8.3. մինչեւ 20 տարի՝ փորձարարակոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների արդյունքներ պարունակող փաստաթղթերը, քաղաքաշինական փաստաթղթերը:

8.4. մինչեւ 10 տարի՝ հաշվապահական փաստաթղթերը, իրավական ակտերը, գործավարական փաստաթղթերը, արխիվային փաստաթղթերի բնօրինակի իրավունքով պատճենները:

8.5. մինչեւ 5 տարի էլեկտրոնային և հեռաչափական փաստաթղթերը, ձեռագրերը, նկարները, գծագրերը, նամակագրությունը, օրագրությունը, հուշագրությունը:

9.Վերը նշված ժամկետների ավարտից հետո փաստաթղթերը, սահմանված կարգով հանձնվում են մշտական պահպանության պետական արխիվ:

10. Թղթային եղանակով ներկայացված բոլոր գործերի փաստաթղթերը թվայնացվում է և պահպանվում համայնքապետարանի բազային ցանցում:

11. Էլեկտրոնային եղանակով գրանցում ստացած փաստաթղթերը պահվում են համայնքապետարանի բազային ցանցում, էլեկտրոնային կրիչների վրա 10 տարի ժամկետով, որից հետո սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հանձնվում են պետական արխիվ:

12. Էլեկտրոնային եղանակով գրանցում ստացած փաստաթղթերը միաժամանակ արտատպվում են և թղթային եղանակով սույն կարգի 3-ից 10-րդ կետերով սահմանված կարգով պահպանվում համայնքապետարանում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 39-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՎ ԵՎ ՊԱՏՎՈԳՐԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից շնորհակալագրերով և պատվոգրերով պարգևատրելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		
	Լիլիա Հարությունյան	
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		

Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՉՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու
Մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի N 39-Ա որոշման

Ստեփանավան համայնքի ղեկավարի շնորհակալագրերի և պատվոգրերի ներկայացման և շնորհման կարգ

1. Սույնով սահմանվում է Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից շնորհակալագրերով և պատվոգրերով քաղաքաշինության, կրթության, առողջապահության, մշակույթի, սպորտի, ձեռնարկատիրության և այլ ոլորտի անձանց և կազմակերպություններին շնորհակալագրերով և պատվոգրերով պարգևատրելու կարգը:
2. Ստեփանավան համայնքի ղեկավարի շնորհակալագիրը, պատվոգիրը տրվում է քաղաքաշինության, կրթության, մշակույթի, սպորտի, ձեռնարկատիրության և այլ ոլորտներում բարեխղճորեն և նվիրումով իրենց մասնագիտական աշխատանքը կատարող, համայնքի զարգացմանը և բարգավաճմանը նպաստող անձանց և կազմակերպություններին:
3. Ստեփանավան համայնքի ղեկավարի պատվոգրով անձինք /կազմակերպությունները, ստեղծագործական կամ աշխատանքային կոլեկտիվները/ պարգևատրվում են Ստեփանավան համայնքի զարգացման գործում մեծ ներդրումների և Ստեփանավանի հանրությանը մատուցած ծառայությունների համար:
4. Ստեփանավան համայնքի ղեկավարի պատվոգրի գեղարվեստական ձևավորման տարրերը ստվարաթղթի վրա գունավոր են, իսկ գրությունները՝ սև, կատարված ուղղահայաց (գրքային) տարբերակով:
5. Պատվոգրի վերևի մասի կենտրոնում զետեղված է Ստեփանավան քաղաքի զինանշանը, ավելի ներքև ձևավոր շրջանակում «Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ Ստեփանավան համայնքի ղեկավարի» գրությունն է՝ չորս տողով, որի ներքևում՝ «ՊԱՏՎՈԳԻՐ» գրությունն է: Պատվոգրի կենտրոնում նշվում է պարգևատրվածի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը /կազմակերպության, հիմնարկի անվանումը/ և հակիրճ հիմնավորվում է պարգևատրվելու հանգամանքը: Տեքստից ներքև երկու տողերի վրա գրություններ են՝ **«Ստեփանավան համայնքի ղեկավար»**, համայնքի ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ստորագրությունն ու կնիքը:
6. Պատվոգրի շրջանակի ստորին աջ մասում նշվում է պատվոգրի տրման ամսաթիվը,
7. Ստեփանավան համայնքի ղեկավարի պատվոգրով պարգևատրելու որոշումը կայացնում է Ստեփանավան համայնքի ղեկավարը և այն պարգևատրված անձին է հանձնվում հանդիսավոր պայմաններում:

8. Ստեփանավան համայնքի ղեկավարի շնորհակալագրով պարգևատրվում են Ստեփանավան համայնքի հանրության առջև վաստակ ունեցող քաղաքացիները /կազմակերպությունները, ստեղծագործական կամ աշխատանքային կոլեկտիվները/՝ տնտեսական, գիտահետազոտական, սոցիալ-տնտեսական, հասարակական, բարեգործական և այլ գործունեության համար:
9. Ստեփանավան համայնքի ղեկավարի շնորհակալագրի գեղարվեստական ձևավորման տարրերը ստվարաթղթի վրա գունավոր են, իսկ գրությունները՝ սև, կատարված ուղղահայաց (գրքային) տարբերակով:
10. Շնորհակալագրի վերևի մասի կենտրոնում զետեղված է Ստեփանավան քաղաքի զինանշանը, ավելի ներքև ձևավոր շրջանակում **«Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ Ստեփանավան համայնքի ղեկավարի»** գրությունն է՝ երեք տողով, ավելի ցածր՝ **«ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ Տրվում է»** երկու տողով գրությունն է: Շնորհակալագրի կենտրոնում նշվում է պարգևատրվածի պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը /կազմակերպության, հիմնարկի անվանումը/ և հակիրճ հիմնավորվում է պարգևատրվելու հանգամանքը: Տեքստից ներքև երկու տողերի վրա գրություններ են՝ **«Ստեփանավան համայնքի ղեկավար»**, համայնքի ղեկավարի անունը, ազգանունը, ինչպես նաև ստորագրությունն ու կնիքը:
11. Շնորհակալագրի շրջանակի ստորին աջ մասում նշվում է շնորհակալագրի տրման ամսաթիվը:
12. Պարգևատրման գործընթացը համակարգում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
13. Համայնքի աշխատակազմի քարտուղարի մոտ անցկացվում է քննարկում և ամփոփում, որի հիման առաջարկ է ներկայացվում համայնքի ղեկավարին, նշելով պարգևատրման ձևը (պատվոգիր, շնորհակալագիր):
14. Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից պարգևատրման կարող են ներկայացվել ինչպես ՀՀ, այնպես էլ օտարերկրյա քաղաքացիներ, կազմակերպություններ:
15. Ստեփանավան համայնքի ղեկավարի պարգևները հանձնում է համայնքի ղեկավարը, կամ նրա հանձնարարությամբ համապատասխան պաշտոնատար անձը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Տրվում է

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՄՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՏՎՈԳԻՐ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 40-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 27.09.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 105-Ա ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 77-րդ հոդվածը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝
   - Արմեն Գրիգորյան-Ստեփանավան համայնքի ղեկավար՝ հանձնաժողովի նախագահ,
   - Անուշ Կիրակոսյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի տեղակալ՝ աճուրդավար,
   - Մերի Խարազյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ՝ արձանագրող,
   - Լևոն Քալանթարյան-Ստեփանավան համայնքի ղեկավարի օգնական՝ հանձնաժողովի անդամ,

- Արսեն Ավագյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ՝ հանձնաժողովի անդամ,
- Էլմիրա Ռևազյան-Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ՝ հանձնաժողովի անդամ,
- Արթուր Սավթալյան-Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,
- Գևորգ Մանուկյան-Ստեփանավան համայնքի Ուրասար վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,
- Սամվել Անտոնյան-Ստեփանավան համայնքի Արմանիս վարչական բնակավայրի ղեկավար՝ հանձնաժողովի անդամ,
- Արմեն Փ. Գրիգորյան-Ստեփանավան համայնքի ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ,
- Ջոն Կիրակոսյան-Ստեփանավան համայնքի ավագանու անդամ՝ հանձնաժողովի անդամ:

2. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 27.09.2024 թվականի թիվ 105-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Սյուզաննա Նազարյան		
Աղունիկ Նալբանդյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 41-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 08.04. 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 31-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Ուժը կորցրած ճանաչել Ստեփանավան համայնքի ավագանու 08.04.2022 թվականի «ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 31-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		

Լիլիա Հարությունյան

Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՉՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 42-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ (ԸՆՏԱՆԻ) ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի և 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Ստեփանավան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		

Վանո Հակոբյան

Լիլիա Հարությունյան

Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հաստատված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու
Մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի N 42-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ԸՆԴԳՐԿՈՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏՆԱՅԻՆ (ԸՆՏԱՆԻ) ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան քաղաքային բնակավայր ընդգրկող համայնքում տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիներ հաշվառելու և պահելու կանոններով (այսուհետ՝ Կանոններ) կարգավորվում են Ստեփանավան քաղաքային համայնքում (այսուհետ՝ Համայնք) տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիներ հաշվառելու, պահելու հետ կապված հարաբերությունները և տարածվում են Ստեփանավան համայնքում գտնվող տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիներ տիրապետող (պահող) ֆիզիկական և իրավաբանական անձանց վրա:

2. Սույն Կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **տնային կենդանի**՝ պատմականորեն մարդու կողմից ընտելացված կենդանի, սույն կանոնների իմաստով նշված հասկացությունը կիրառելի է միայն շների և կատուների համար.

2) **գյուղատնտեսական կենդանի**՝ մարդու կողմից սննդամթերքի արտադրության համար պատմականորեն ընտելացված և բուծվող կենդանի.

3) **տնային (ընտանի) և (կամ) գյուղատնտեսական կենդանի** (այսուհետ միասին՝ նաև կենդանիներ) **տիրապետող** (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում հսկողության և (կամ) խնամքի ներքո գտնվում է կենդանին.

4) **տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիների նույնականացում՝** տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիների վրա ամրացված նույնականացման յուրահատուկ, չկրկնվող համարներին համապատասխան կենդանիների հաշվառման էլեկտրոնային տեղեկատվական համակարգում կենդանիների մասին տվյալների հաշվառում, ինչը հնարավորություն է ընձեռում անհատականացնել կենդանիներին: Տնային (ընտանի) և գյուղատնտեսական կենդանիների վրա նույնականացման չկրկնվող համարներն ամրացվում են համայնքային անասնաբույժի կամ անասնաբուժական ծառայության միջոցով՝ կենդանու մարմնի որոշակի մասում ծածկագրավորված տեղեկություն պարունակող հատուկ էլեկտրոնային միկրոչիպի՝ կրիչի ներարկման կամ դաջվածքի միջոցով.

5) **տնային կենդանիներ պահելու թույլտվություն՝** համայնքի ղեկավարի կողմից սույն կանոններով սահմանված պահանջներին համապատասխան տրված թույլտվություն:

2. Տիրապետողի իրավունքները և պարտականությունները

3. Տիրապետողն իրավունք ունի՝

1) հիմնել կենդանիների տիրապետողների կազմակերպություն և (կամ) անդամակցել դրան,

2) ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն կենդանուն հաշվառելու և պահելու հետ կապված հարցերի վերաբերյալ,

3) սույն կանոններով նախատեսված այլ իրավունքներ:

4. Տիրապետողը պարտավոր է՝

1) սույն կանոններին համապատասխան 15-օրյա ժամկետում իրականացնել նոր ձեռք բերված տնային կենդանու հաշվառումը,

2)կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել սննդի, ջրի, քնի, շարժման, բնական ակտիվության նկատմամբ նրա պահանջները,

3) պահպանել կենդանուն պահելու սանիտարահիգիենիկ կանոնները,

4) անհապաղ անասնաբուժական կամ առողջապահական կազմակերպություններին հայտնել կենդանու կողմից մարդու կամ այլ կենդանու առողջությանը վնաս հասցնելու մասին և զննման ու կարանտինային հսկողության իրականացման համար կենդանուն տեղափոխել մոտակա անասնաբուժական կազմակերպություն,

5) կենդանու հիվանդությունների կանխման նպատակով իրականացնել սանիտարահիգիենիկ միջոցառումներ,

6) բացառել կենդանու կողմից ընդհանուր օգտագործման տարածքների, բակերի մայթերի, փողոցների, սիզամարգերի, ինչպես նաև հանգստյան կանաչ գոտիների աղտոտումը,

7) կենդանուն պահելուց հրաժարվելու դեպքում փոխանցել այլ անձի,

8) արգելվում է կենդանուն թողնել առանց հսկողության,

9) տնային կենդանի պահելու համար ձեռք բերել համապատասխան թույլտվություն՝ «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

10) պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոններով տիրապետողի համար սահմանված այլ նորմերը և կանոնները,

11) ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասազերծման ապահովման կենդանուն դուրս չհանել:

3. Կենդանիների հաշվառումը

5. Կենդանիների հաշվառումն իրականացվում է մարդկանց և կենդանիների համար հատկապես վտանգավոր և վարակիչ հիվանդությունների հայտնաբերման, վարակված կենդանիների հայտնաբերման ու պրոֆիլակտիկայի ենթարկելու նպատակով:

6. Կենդանիները հաշվառման են ենթակա սկսած վեց ամսական հասակից:

7. Հաշվառման ենթակա չեն մանր կենդանիներն ու թռչունները, որոնք պահվում են դեկորատիվ նպատակով, ինչպես նաև կենդանաբանական այգիներում պահվող կենդանիները:

8. Հաշվառումն իրականացնում է համայնքի ղեկավարը՝ կենդանիների քանակի և դրանց կուտակումների վերաբերյալ օբյեկտիվ տեղեկությունների հավաքագրման միջոցով բնակչության իրավունքների և շահերի հաշվառմամբ, կենդանիների պահման համար համալիր միջոցառումների պլանավորման և կատարման նպատակով:

9. Կենդանիների հաշվառումն իրականացվում է դրանց ձեռքբերման կամ Ստեփանավան համայնքի տարածք ներմուծման պահից 15-օրյա ժամկետում:

10. Հաշվառման արդյունքում տիրապետողին տրվում է գրանցման վկայական և նույնականացման համար: Հաշվառման մասին նշում է կատարվում կենդանիների հաշվառման գրքում:

11. Կենդանու նույնականացման համարը նշվում է կենդանու վզկապի կամ ականջին ամրացվող հատուկ հաշվեպիտակի վրա:

12. Կենդանու հաշվառման ժամանակ տիրապետողը պարտադիր պետք է ծանուցվի կանոնների մասին, ինչը հավաստվում է տիրապետողի ստորագրությամբ: Տիրապետողն իրավունք ունի հաշվառող մարմնից անվճար տեղեկություններ ստանալ այն վայրերի մասին, որտեղ ինքն իրավունք ունի կազմակերպել կենդանու զբոսանքը կամ արոտը, ինչպես նաև այն վայրերի մասին, որտեղ թույլատրված է կենդանիների թաղումը:

13. Կենդանու մահվան կամ սպանդի դեպքում կենդանու տիրապետողը պարտավոր է հաշվառող մարմնին հանձնել գրանցման վկայականը, ինչի մասին նշում է կատարվում գրանցման գրքում:

14. Կենդանուն այլ անձի տիրապետությանը հանձնելու դեպքում կենդանու հետագա վերահաշվառում իրականացնելու համար նոր տիրապետողին են հանձնվում կենդանուն նույնականացնող համարի նշումով կենդանու վզկապը և գրանցման վկայականը:

15. Գրանցման գրքույկում նշվում են հետևյալ տեղեկությունները՝

1) գրառման հերթական համարը և հաշվառման տարեթիվը,

2) տիրապետողի անունը, ազգանունը, բնակության հասցեն, անձնագրի տվյալները,

3) կենդանու տեսակը, անունը, սեռը, գույնը, ցեղատեսակը, ծննդյան թիվը (եթե հայտնի է),

4) գրանցման վկայականի տրամադրման ամսաթիվը և հերթական համարը,

5) կենդանու նույնականացման համարը,

6) տիրապետողի մոտ գտնվող կենդանիների թվաքանակը,

7) այլ տեղեկություններ:

16. Գրանցման վկայականի կորստյան դեպքում տիրապետողի դիմումի հիման վրա նրան տրվում է գրանցման նոր վկայական:

4. Կենդանիներին պահելու, զբոսանքի իրականացման և վաճառքի պայմանները

17. Ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են կենդանիներին պահելիս հաշվի առնել այդ կենդանիների կենսաբանական և անհատական առանձնահատկությունները, պահպանել ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

18. Բնակելի շենքերում կենդանիներ մշտապես կամ ժամանակավորապես պահելիս պետք է ապահովվեն մարդկանց և կենդանիների կյանքի բարենպաստ պայմանները:

19. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքներում կենդանիներ պահելն արգելվում է:

20. Կենդանիների զբոսանքն թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների:

21. Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝

1)Շների զբոսանքն իրականացնելիս ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը,

2)շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշի կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ:

3)մայթերով շարժման ժամանակ, հետիոտնի ճանապարհին, մարդաշատ վայրերում և երթևեկության հատման մասերում ագրեսիվ շանը պահել դնչկալով:

4)անհապաղ անասնաբուժական կազմակերպությանը հայտնել կենդանու կատաղության հիվանդության կասկածի մասին և մինչ անասնաբույժ – մասնագետի ժամանումը մեկուսացնել կենդանուն:

22. Տիրապետողը պարտավոր է նաև իրականացնել շան տարեկան պատվաստումը կատաղության դեմ:

23. Ճանապարհը կամ երթևեկելի մասն անցնելիս, ինչպես նաև մայրուղիների մոտ՝ ճանապարհային պատահարների կանխման նպատակով, տիրապետողը պարտավոր է կենդանուն պահել կարճ կապի վրա:

24. Տիրապետողները պարտավոր են թույլ չտալ մայթերի կամ այլ հանրային օգտագործման տարածքների աղտոտումը կենդանու զբոսանքի ընթացքում, ինչպես նաև պարտավոր են մաքրել դրանց կենսագործունեության արդյունքները:

25. Շներ տիրապետողները իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացման շինություններում:

26. Կենդանիների վաճառքը թույլատրվում է իրականացնել մասնագիտացված խանութներում, կենդանիների շուկաներում կամ այդ նպատակի համար հարմարեցված հատուկ առանձնացված վայրերում՝ անասնաբուժական հատուկ վկայականի առկայության դեպքում:

27. Հասարակական վայրերում (խանութների հարևանությամբ, այգիներում, կայարաններում, գյուղատնտեսական արտադրանքի և սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում և այլն) կենդանիների վաճառքն արգելվում է:

28. Տիրապետողներն իրավունք ունեն կենդանիներին տեղափոխել քաղաքային տրանսպորտով: Շները պետք է քաղաքային տրանսպորտով փոխադրվեն կարճ կապով և դնչկալով, բացառությամբ փոքր դեկորատիվ ցեղատեսակների և փոքր առանց ցեղատեսակի շների, որոնք տեղափոխվում են պայուսակներում կամ տեղափոխման համար հարմարեցված սարքերում:

29. Արգելվում է՝

1) կենդանուն գրգռել մարդկանց և կենդանիների դեմ,

2) կռիվների կամ ներկայացումների համար կենդանիների օգտագործումը, որոնց արդյունքում կենդանին կարող է տանջվել, ցավեցվել, վնասվել կամ սպանվել,

3) կենդանիների երկարատև կամ մշտապես պահումը տրանսպորտային միջոցում,

4) անհամատեղելի տեսակների միևնույն տարածքում կամ միևնույն տարածքում միևնույն տեսակների բնակեցումը, որոնց միջև կարող է առաջանալ ագրեսիվություն,

5) հարբած անձանց և 14 տարին չլրացած անչափահասներին 15 կիլոգրամից ավելի քաշ ունեցող շներին զբոսանքի տանելը,

6) կենդանիների հետ խանութներ, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների օբյեկտներ, բժշկական, կրթական և մշակութային հաստատություններ այցելելը, բացառությամբ ցուցադրության կամ համանման այլ միջոցառումների այցելության դեպքերի:

5. Կենդանիների դիերի թաղումը և թափոնումը

30. Տիրապետողներն իրավունք ունեն թաղելու և թափոնելու իրենց պատկանող կենդանիների դիերը:

31. Կենդանիների դիերի թաղումն իրականացվում է այդ նպատակով Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից հատուկ առանձնացված վայրերում՝ սահմանված սանիտարահիգիենիկ կանոններին համապատասխան:

6. Գյուղատնտեսական կենդանիներ պահելու առանձնահատկությունները

32. Գյուղատնտեսական կենդանի կարող է պահել այն անձն, ով ունի գյուղատնտեսական կենդանի պահելու համար անհրաժեշտ պայմաններ:

33. Կենդանիների զբոսանքը կամ արոտը կարող է կազմակերպվել տիրապետող անձի հսկողության ներքո՝ միայն դրա համար նախատեսված վայրերում:

34. Արգելվում է կենդանու ազատ կամ կապված արոտը դրա համար չնախատեսված վայրերում (փողոց, զբոսայգի, պուրակ, տնամերձ տարածք և այլն):

35. Տիրապետողները պարտավոր են հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը, թույլ չտալ շրջակա միջավայրի աղտոտումը կենդանիների կենսագործունեության արդյունքներով:

36. Մեղվապահները պարտավոր են մեղուները պահել իրենց տարածքներում, որոնք պետք է սահմանազատված լինեն երկու մետրից ոչ պակաս բարձրության պարսպով:

7. Կանոնները խախտելու պատասխանատվությունը

37. Սույն կանոնների խախտումն առաջացնում է վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվություն:

8. Անցումային դրույթներ

38. Տիրապետողները պարտավոր են հաշվառել իրենց տիրապետության ներքո գտնվող կենդանիներին՝ Կանոններն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրյա ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 43-Ա

ՄԱՅԻՍԻ 9-Ի՝ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԼՂՀ ՄԱՐՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. ԼՂՀ մարտական գործողություններին մասնակցած զոհված ազատամարտիկների և արցախյան պատերազմում զոհված զինծառայողների ընտանիքներին տալ դրամական աջակցություն՝ տասնհինգ հազարական դրամի չափով (կցվում են թիվ 1,2,3 հավելվածները):

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		

Մարտուն Մարտիրոսյան
Սյուզաննա Նազարյան
Աղունիկ Նալբանդյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1՝
Հայաստանի Հանրապետության Լոռու
Մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի N 43-Ա որոշման

ՀՀ Ստեփանավան քաղաքի մինչև 1994թ.-ի մայիսի 14-ը զոհված ազատամարտիկների

ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

h/h	Անուն, ազգանուն	Հասցե
1	Մուրադյան Աշոտ Սուրենի	Ռումինական 22/23
2	Քոչարյան Ալեքսանդր Ռուշանի	Աշոտաբերդ 22
3	Ավանեսյան Էրիկ Վիլյաթի	Էնգելսի 62
4	Սարգսյան Կամո Արմենակի	Արևելյան 14
5	Օլքինյան Համլետ Միշայի	Դեսինի 56/7
6	Մելքոնյան Մնացական Մարտունի	Տերյան 2/2
7	Ավագյան Վարդան Սարգսի	Գերմանական 14
8	Անտոնյան Համլետ Վոլոդի	Գ. Նժդեհ 21
9	Սեդրակյան Աշոտ Վլադիմիրի	Դեսինի 5/10
10	Ասրյան Շավարշ Սլավիկի	Աշոտաբերդ 22/4

Հավելված 2՝
Հայաստանի Հանրապետության Լոռու
Մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի N 43-Ա որոշման

ՀՀ Ստեփանավան քաղաքի 1994թ.-ի մայիսի 14-ից առ այսօր զոհված
ազատամարտիկների
ԱՆՎԱՆԱՑՈՒՑԱԿ

h/h	Անուն, ազգանուն	Հասցե
1	Ղազարյան Արամ Զավենի	Մատրոսովի 51
2	Օսիպով Յաշա Ապրեսի	3-րդ մկշ.
3	Հակոբյան Մերուժան Կոլյայի	Ռումինական
4	Ռամազյան Արմեն Սամվելի	Վիրահայոց 78/12
5	*Մաթևոսյան Գերասիմ Ենոքի*	*Վիրահայոց 80/8*
6	Իվանկով Անդրանիկ Անդրյուշաի	Արևելյան 6/54
7	Սարգսյան Ռուսլան Նադիի	Իսահակյան
8	Առաքելյան Ազնավուր Վեհարի	Ամերիկական 16/5
9	Գյուլզադյան Աշոտ Գարիկի	Բաղրամյան 122
10	Աբովյան Էրիկ Գագիկի	Կամո 57
11	Մանուկյան Ռուսլան Զորիկի	Եկեղեցու 12

Հավելված 3՝
Հայաստանի Հանրապետության Լոռու
Մարզի Ստեփանավան համայնքի ավագանու
2025 թվականի մայիսի 07-ի N 43-Ա որոշման

2020 թվականի արցախյան պատերազմում զոհված զինծառայողների ցուցակ

Հ/Հ	Ազգանունը Անունը Հայրանունը	Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	Մահվան օր, ամիս, տարեթիվ	Հաշվառման հասցեն
1	Չիպլիև Արտեմ Գագիկի	26.02.2000թ.	01.10.2020թ.	ք. Ստեփանավան, Դեսինի 45
2	Ղազարյան Ռաֆայել Աշոտի	27.07.1993թ.	02.10.2020թ.	ք. Ստեփանավան, Բաղրամյան փող. շենք 19 բն. 12
3	Բաշոյան Միքայել Սամվելի	30.11.1981թ.	20.10.2020թ.	ք. Ստեփանավան, Բաղրամյան փող. տ. 150
4	Չատինյան Արեն Արթուրի	11.08.2000թ.	24.10.2020թ.	ք. Ստեփանավան, Տերյան փող. թիվ 11
5	Կիրակոսյան Արեն Կարենի	10.12.2000թ.	26.10.2020թ.	գ. Կաթնաղբյուր
6	Հայրապետյան Ալեքսանդր Սամվելի	02.07.1990թ.	02.10.2020թ.	ք. Ստեփանավան, Տերյան փող. 3 -րդ փակ. տ. 13
7	Մանասյան Անդրանիկ Կամոյի	2002թ.	23.10.2020թ.	գ. Կաթնաղբյուր
8	Վերանյան Արթուր Ռոբերտի	22.01.1999թ.	04.11.2020թ.	ք. Ստեփանավան, Իսահակյան փող. շենք 3 բն. 4
9	Փափազյան Հովհաննես Հարությունի	28.07.2001թ.	08.11.2020թ.	ք. Ստեփանավան, Մատրոսովի 46
10	Սահակյան Դավիթ Բեգլարի	12.11.2001թ.	28.12.2020թ.	ք. Ստեփանավան, Բաղրամյան 103/43
11	Մուրադյան Արսեն Անդրանիկի	01.09.2001թ.	2020թ.	ք. Ստեփանավան, Պրոմեթեյ վ/տ
12	Առաքելյան Արմեն Մարտինի	10.10.2000թ.	28.09.2020թ.	ք. Ստեփանավան, Ռաֆֆի 5/7
13	Ղարաջյան Գոռ Հակոբի	24.10.2000թ,	28.09.2020թ.	ք. Ստեփանավան, Պուշկինի 4
14	Մուրադյան Գևորգ Արարատի	15.10.2001թ.	27.09.2000թ.	ք. Ստեփանավան, 4-րդ մկշ, 19/1
15	Մարգարյան Կարեն Աշոտի	08.08.1991թ.	02.10.2020թ.	ք. Ստեփանավան, Անդրանիկի 53
16	Զաքարյան Դանիել Արմենի	12.08.2002թ.	13.09.2022թ	ք. Ստեփանավան, Արևելյան 6/7

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մայիսի 2025 թվականի N 44-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով Ստեփանավան համայնքի ավագանին *որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հինգերորդ նիստի գումարման օր սահմանել 06.06.2025թ. ժամը 14^{30} ին:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Հրահատ Աբրահամյան		
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Ատոմ Գագինյան		
Անուշ Իսպրիյան		
Ջոն Կիրակոսյան		
Արծրուն Հակոբյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Սյուզաննա Նազարյան		
Աղունիկ Նալբանդյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ ՀՐԱՀԱՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ